ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 սեպտեմբերի 2022 թվականի N 360 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ և 68-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N202-Ն որոշմամբ հաստատված կարգը,

որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ մինչև 2022 թվականի հոկտեմբերի 1-ը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել շահութաբաժնի առկա պարտավորությունը:

09.09.2022

X

ԴՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано ДУКАСЯН РОБЕРТ 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԴՈՒԿԱՍՅԱՆ

2022թ. Սեպտեմբերի 9
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2021թ. դեկտեմբերի 9-ի N 360-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների 2021 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստան Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների գումարի չափը

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	ՀՀ 2022թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարն՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (ՀՀ դրամ)
1	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	1439200
2	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	15447000
3	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ	
4	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	491200
5	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ	6270500
6	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	

ՀՀ Սյունիքի մարզպետարանի

գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան